«ՓՐԿՈՒԹԻՒՆԸ» ՈՐՊԷՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆԱՓՐԿՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐԸ (ԸՍՏ ԱՔՍՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՀԱՒԱՔ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՆԻՒԹԵՐԻ)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՈՒԹԵԱՆ

Հայոց ցեղասպանութեան տարիներին հայերի իրական եւ կեղծ փրկութեան խնդիրների մէջ առանձնանում են մի քանի հարցեր, որոնք հանգամանալի քննութեան կարիք են զգում: Դրանցից մէկին՝ հայերի փրկութեանը իրենց բնակութեան վայրերում իրականացուած կոտորածների ժամանակ արդէն իսկ անդրադարձել ենք մի շարք զեկուցումներում եւ հրապարակումներում:[1] *Հարցն այն է, թէ միգուցէ՞յլ է եղել հայոց փրկութեան գործը աքսորի ընթացքում եւ համակենտրոնացման ճամբարներում, երբ հայ մարդիկ աւելի շատ ժամանակ ու հնարաւորութիւն են ունեցել շփուելու շրջապատի ոչ միայն թուրք եւ քուրդ, այլ նաեւ արաբ ու չեչեն բնակչութեան հետ: Այդ հարցին պատասխան գտնելու ակնկալիքով քննութեան ենք ենթարկել Միջագետք աքսորուած հայ վերապրածների վկայութիւնները, որոնք հաւաքուել են տեղում (Սիրիա, գերազանցապէս Տէր-Զօրում եւ Միջագետքի միւս հայկական գաղութներում) հետցեղասպանական տարիներին եւ ամբողջացուել են մի ժողովածուի մէջ, որն իր բնոյթով առաջինն է.*[2] *Ինչպէս գրում է հատորի կազմող Լեւոն Մեսրոպը ժողովածուի ներածութեան մէջ, «Այս գիրքը շարունակութիւնն է «1915 — Աղէտ եւ Վերածնունդ»ին, կամ երկրորդ եւ վերջին հատորը, որ կ՚ամբողջացնէ առաջինը: «1915 — Աղէտ եւ Վերածնունդ»ին մէջ, իրենց յուշերը գրեցին վերապրած հայեր: Պէտք էր լսել նաեւ* անոնք որոնց համար աղէտը կը շարունակուի մինչեւ այսօր. Որոնք

1 **Harutyun Marutyan**, *The Issue of the Rescue of Armenians by Ottoman Subjects During the Armenian Genocide*,- "Journal of the Society for Armenian Studies", vol. 26 (2017): 39-61; Idem., *Rescuing Armenians during the Genocide: The Righteous Among the Nations Approach*,- in The First International Conference on Nations under Genocide. Pazmany Peter Catholic University, Salahaddin University-Erbil, 19-21 April 2017, Budapest (edited by Istvnn Ճtvվs, Zsuzsanna Keresztfalvi). St Stephen's Society Publishers to the Holy See, Budapest, 2018, 35-47; Idem, *Kwestia ratowania Ormian przez obywateli osmanskich w czasie Ludobgjstwa po pełnionego na Ormianach w Turcji (część I)*,- "Biuletyn Ormianskiego Towarzystwa Kulturalnego (Krokgw)", numer 90/91, 2017: 25-47; Idem, *Kwestia ratowania Ormian przez obywateli osmanskich w czasie Ludobgjstwa popełnionego na Ormianach w Turcji (część II)*,- "Biuletyn Ormianskiego Towarzystwa Kulturalnego", numer 92/93, 2018: 56-69; **Յարութիւն Մարութեան**, *Հայոց ցեղասպանութեան տարիներին հայերի իրական եւ կեղծ փրկութեան խնդրի շուրջ*,- ԼՀԳ 2 (2018), 30-60: Հրապարակումները հիմնուած էին «*Հայոց ցեղասպանութիւնը օսմանեան Թուրքիայում: Վերապրածների վկայութիւններ: Փաստաթղթերի ժողովածու*» (գլխ. խմբ., հեղինակ եւ կազմող՝ Ամատունի Վիրաբեան, հեղինակ եւ կազմող՝ Գոհար Աւագեան), Երեւան, Հայաստանի ազգային արխիւ, հտ. 1-3, 2012 հրատարակութեան յատկապէս առաջին եւ երկրորդ հատորներում տեղ գտած նիւթերի վրայ, որոնք հաւաքագրուել էին վերապրողներից 1915-1918 թթ. ընթացքում: Պատմութիւնների զգալի մասը վերաբերում է տեղերում իրականացուած զանգուածային կոտորածներին:

2 **Աղէտէն վերապրողներ**, *Տէր-Զօր*: (կազմող Լեւոն Մեսրոպ), Փարիզ, տպարան Պ. Էլէկեան, 1955:

չմեռան, բայց նաեւ՝ չվերապրեցան. որոնք կենդանի-նահատակներ են... *[ընդգծումն իմն է – Յ. Մ.]»:*[3] *Ընդգծուած միտքը, ինչպէս ինձ է թւում, շատ բնութագրական է նաեւ ներկայացուող յօդուածի տեսանկիւնից. մարդիկ փրկուել են, չեն մահացել, չեն սպանուել, սակայն նրանք նաեւ չեն վերապրել՝ կենդանի-նահատակ են, կամ արեւելահայերէն ասած՝ մեռած են, թաղած չեն:*

Ժողովածուում ի մի բերուած նիւթի համար կազմողը Տէր Զօրում բնակուող տկն. Փառանձեմ Պալեանին «կը պարտինք երկու հատորները ամբողջացնող «Տէր-Զօրի» մասը: Իրենն են տեղեկութիւնները Միջագետքի հայկական գաղութներուն եւ Սէնճարի լեռնային շրջանին մէջ ապրող քրդախօս հայերու մասին»:[4] *Այսինքն, ի մի բերուած ու տպագրուած նիւթը հաւաստի է նախ եւ առաջ այն բանի շնորհիւ, որ գրանցուել է տեղում, անձամբ տկն. Պալեանի կողմից, եւ փոխանցում է զրուցակիցների ուղիղ խօսքը, ու բնաւ չի ենթարկուել գրական մշակման:*

Իմ վերոնշեալ հրապարակումներում հանգամանալի անդրադարձ է կատարուած «փրկութիւն» հասկացութեան՝

ա) 1948 թ. «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնուենցիայից բխող ձեւակերպումներին, որտեղ «ցեղասպանութիւն» եզրոյթի հինգ բնորոշումներից չորսում ցեղասպանուող մարդիկ ողջ են մնում, բայց եւ այնպէս համարւում են ցեղասպանութեան ենթարկուած: Մասնաւորապէս, խօսքը վերաբերւում է կոնուենցիայի Յօդուած 2-ի բ) կէտին. Ցեղասպանութեան ենթարկուող «խմբի անդամներին մարմնական լուրջ վնասուածքներ կամ մտաւոր վնաս պատճառելը»:

«Մարմնական լուրջ վնասուածքներ կամ մտաւոր վնաս պատճառել» (Serious bodily or mental harm) *հասկացութեան պարզաբանմանն հանգամանօրէն անդրադարձել է «1991 թուականից ի վեր նախկին Հարաւսլաւիայի տարածքում կատարուած միջազգային մարդասիրական իրաւունքի լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց հետապնդմանն ուղղուած միջազգային տրիբունալը»* (International Tribunal for the prosecution of Persons Responsible for Serious Violations of International Humanitarian Law Committed in the Territory of the Former Yugoslavia since 1991), *օրինակ, case IT-05-88/2-A-ում (8 ապրիլի 2015 թ.). Այստեղ առկայ է հետեւեալ պարզաբանումը. «Լուրջ հոգեկան վնասը ներառում է «աւելի, քան մտաւոր ունակութիւնների աննշան կամ ժամանակաւոր խանգարումներ, ինչպիսիք են* ուժեղ վախի կամ սարսափի պատճառումը, ահաբեկումը կամ սպառնալիքը»*: Իրօք,* մարմնական կամ հոգեկան լուրջ վնաս պատճառելու համար գրեթէ բոլոր դատավճիռները ներառում են բռնաբարութիւններ կամ սպանութիւններ*: Ցեղասպանութեան համար դատապարտումը պաշտպանելու համար խմբի անդամներին հասցուած մարմնական կամ հոգեկան վնասը պէտք է լինի այնպիսի լուրջ բնոյթի, որ* սպառնայ դրա ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը *[ընդգծումներն իմն են – Յ. Մ.]: Ապա շարունակւում է. «լուրջ հոգեկան վնասը բխում է միայն այն գործողութիւններից, որոնք լուրջ եւ երկարաժամկէտ անբարենպաստութիւն են պատճառում պաշտպանուած խմբի անդամների նորմալ եւ կառուցողական կեանք վարելու կարողութեանը եւ որպէս այդպիսին սպառնում են խմբի ֆիզիկական ոչնչացմանը»:*[5]

3 Նոյն տեղում, էջ 9:

4 Նոյն տեղում, էջ 10-11:

5 Մանրամասն տես այստեղ https://cld.irmct.org/notions/show/884/serious-bodily-or-mental-harm# եւ https://cld.irmct.org/assets/filings/Judgement-Tolimir-reduced.pdf

բ) Եաղուաշեմեան «Ժողովուրդների/մարդկանց միջի երախտաւորի» (Righteous among the Nations) շուրջ վեց տասնամեակի կեանք եւ միջազգային լայն ճանաչում ունեցող ձեւակերպումներին, ըստ որոնց այդ տիտղոսը շնորհելու հիմնարար պայմաններն են. 1) Փրկողի ակտիւ ներգրաւուածութիւնը *մէկ կամ մի քանի հրէաների մահուան կամ մահվան ճամբարներ աքսորուելու վտանգից փրկելու գործին, 2)* Փրկողի կեանքը, ազատութիւնը կամ պաշտօնը ռիսկի տակ դնելը, *3) Երբ առաջնային մօտիվացիան [շարժառիթը] հետապնդուող հրէայ անհատին օգնելու միտումն է, այսինքն, օգնութիւն* ոչ թէ վճարի կամ որեւէ այլ պարգեւի/հատուցման դիմաց, *որպիսին կարող է լինել, օրինակ, փրկուած անհատի կրօնափոխումը կամ որդեգրումը եւ այլն, 4) Օգնութիւն ստացած մարդկանց* վկայութեան կամ էլ դրան հաւասարազօր փաստաթղթերի առկայութիւնը, *որը հաստատում է փրկութեան բնոյթը եւ դրա իրականացման դրդապատճառները:*[6] Տիտղոսը չի տրւում, եթէ փրկութեան շարժառիթը հրէայ մարդու փրկութիւնից զատ այլ բան է: *Նման շարժառիթներ կարող են լինել ա) ֆինանսական օգուտը, բ) փրկուած անձանց կրօնափոխման ցանկութիւնը, կամ արդէն իսկ կրօնափոխուած հրէաների պաշտպանութիւնը, քանի որ նրանք դիտւում են իբրեւ քրիստոնեաներ, եւ փրկողները գիտակցում են, որ չպէտք է նրանց դիտեն, նրանց հետ վերաբերուեն իբրեւ հրէաների, գ) հրէայ երեխայի փրկութիւնը նրան որդեգրելու նպատակով, դ) փրկութիւնն իբրեւ արդիւնք դիմադրական կամ ռազմական գործողութեան, որը նպատակաուղղուած չէր հէնց հրէաների փրկութեանը: «Երախտաւորի» տիտղոսը չշնորհելու մէկ այլ պատճառ կարող է լինել այն, որ* մէկ կամ մի քանի հրէաներ փրկող անձը ներգրաւուած է մարդասպանութիւնների, պատերազմական յանցագործութիւնների մէջ, կամ վնաս է պատճառում այլ մարդկանց *[ընդգծումներն իմն են - Յ. Մ.]:*[7]

Մեր հրապարակումներում մեծապէս կարեւորուել են Ռիչարդ Յովհաննիսեանի մի յօդուածը,[8] *որը, կարելի է ասել, ունի ուղենիշային բնոյթ եւ շարադրուած է ցեղասպանութեան ականատես-վերապրողների պատմութիւնների ինչպէս քանակական, նոյնպէս եւ որակական տուեալների վերլուծութեան վրայ:*

Հասկանալի է, որ վերապրողների պատմութիւնները այնպէս չեն շարադրուած, որ հարիւր տարի անց ուղղակիօրէն պատասխանեն նիւթի որոշակի դասակարգմամբ հետաքրքրուած հետազօտողների հարցերին: Ընդհանուր առմամբ, հետեւել ենք պրոֆ. Յովհաննիսեանի առաջ քաշած «փրկութեան» մօտիւացիաների ձեւակերպումներին, այն է՝ սեռական, տնտեսական շահագործում, կրօնական, հումանիտար բնոյթի, *սակայն իրականացուել են նաեւ որոշ սեփական, նիւթի վերլուծութիւնից բխող խմբագրումներ, որոնք միտուած են յստակեցումների:*

Յօդուածում չենք անդրադառնում վերոբերեալ բոլոր մօտիւացիաներին, ինչը, մեր համոզմամբ, շատ աւելի ծաւալուն աշխատանք կարող է դառնալ, այլ միայն որոշ մօտիւացիների, որոնք, ինչպէս ստորեւ կ'երեւայ, ուղղուած են այնպիսի «փրկութեանը», որը ժամանակ անց աւարտւում է «փրկուածի» մահուամբ կամ ցեղասպանական բնոյթի գործողութեան ենթարկուելով՝

6 "The Righteous Among the Nations: FAQ," available at <http://www.yadvashem.org/yv/en/righteous/faq.asp> (accessed August 20, 2023).

7 Նոյն տեղում:

8 **Richard G. Hovannisian**, *Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide*,- in The Armenian Genocide: History, Politics, Ethics, edited by Richard G. Hovannisian, 173-207. New York: St. Martin's Press, 1992.

Փրկութեան խոստումներ ու դրանց իրականացման ձեւեր.

«Փրկութեանը», որպէս կանոն, նախորդում է փրկութեան խոստումը: Դրանց մէջ առանձնանում են երկու բնոյթի խոստումներ: Առաջին, դրանք կարճաժամկէտ փրկութեան *մասին են, որոնց կենսագործումը ենթադրում է, որ «փրկուողները» առաջիկայում չեն սպանուի, կամ չեն մեռնի կեանքի վատ պայմանների պատճառով: Այդ «առաջիկան» կարող է տեւել մի քանի ժամից մինչեւ մի քանի օր կամ ամիս կամ տարի (որդեգրման կամ ամուսնութեան պարագայում): Երկրորդ, ինչպէս ցոյց է տալիս նիւթի քննութիւնը,* փրկութեան խոստումներն որեւէ առնչութիւն չունեն մարդասիրութեան գաղափարի ու դրա դրսեւորումների հետ: Դրանք ամենաուղղակի առնչութիւն ունեն միայն ու միայն նիւթական շահագրգռուածութեան հետ: *Այսինքն, «փրկողի» մտքում «փրկուողից» նիւթական շահ ստանալն է լինի դա կաշառքի, անվճար աշխատացնելու (սպասուհի, տնային զանազան աշխատանքներ կատարող, ոչխարների հոտը պահող եւ այլն), թալանելու (չէ որ աքսորուելուց մարդիկ իրենց հետ արժէքաւոր բաներ են վերցնում գումար, ապրանք, հագուստ եւ այլն), սեռական շահագործման եւ այլ նման ճանապարհներով: Այո՛, երբեմն երեխաներին որդեգրում են, ինչը, որպէս կանոն, աւարտւում է նրանց իսլամացմամբ, անունը փոխելով, անուղղակիօրէն՝ ստիպմամբ ամուսնութեամբ: Արդիւնքում մարդիկ կորցնում են իրենց ազգային ինքնութիւնը, դադարում են հայ լինելուց՝ իրենց «մտաւոր վնաս հասցնելու պատճառով»: Այսինքն, եթէ կարճ, փրկութեան խոստումներն աւարտւում են դրանց դրժումով ու յաջորդող ուղղակի եւ անուղղակի բռնութիւններով: «Փրկուողի» ազատ կամքի դրսեւորման հնարաւորութիւնների մասին խօսք անգամ չկայ: Դիտարկենք ասուածը օրինակների հիմամբ.*

Իզմիտցի Եպրաքսէ Մելգոնեանի ամուսինը թուրքերին կաշառելով խուսափում է աքսորից, մնում է Իզմիտում, որպէսզի փորձի կնոջն ու երեխային ազատել: Սակայն «թուրքերը թէ կաշառքը առած էին եւ թէ զինք գաղթական հանած: ... Թշուառութեան հետեւանքով ամուսինս եւ զաւակս մեռան հոս [Ռաս-էլ-Այն]»:[9]

Բաշգալեցի Ագնիւ Թադոսէանի եղբօրը, հակառակ նրա քրոջ կողմից «5 ոսկիով կաշառելուս», միեւնոյն է, որպէս փախստական, բռնում են եւ տանում:[10]

Մարաշցի Գէորգ Աբգարեանը պատմում է, որ Մարաշից Այնթապ աքսորի ճանապարհին, երբ նախորդող «9 ժամուան միջոցին մեզմէ 1500 երիտասարդ պակսած է», «մեզմէ դրամ հաւաքեցին պատճառաբանելով որ պահակները անբաւական են եւ մեզ խուժանէն պաշտպանելու համար ստիպուած են քաղաքային ուրիշ պահակներ վարձել»: Սակայն նոյն երեկոյեան «աղջիկներու ընտրանին առին մեզմէ», այսինքն՝ աքսորականներին պաշտպանելու փոխարէն բռնի ուժով նրանց միջի գեղեցիկ աղջիկներին առեւանգում են:[11]

Նոյն մարդու պատմածով, «Կէսօրին դարձէալ Տիարպէքիրի կուսակալը, Էնուէրը եւ Տէր-Զօրէն Զէքի փաշան եկան: Անոնց մեկնումէն վերջ, մունետիկ մը կը պոռայ որ Ռաս էլ Այնի երկաթուղին աւրուեր է, անոնք, որ կ'ուզեն շինութեան մասնակցիլ, թող զօրանոց ելլեն եւ անոնց ներում պիտի շնորհուի: Այս ձեւով 5-6 անգամ խումբ-խումբ երիտասարդներ տարին եւ ջարդեցին»:[12]

9 *Տէր-Զօր*, 149-150:

10 Նոյն տեղում, 253:

11 Նոյն տեղում, 167-168:

12 Նոյն տեղում, 170: Նշենք, որ այս երեք անձինք երբեք միասին չեն եղել Դեր Զօրում:

Խարբերդի նահանգի Հողէ գիւղացի Մելքոն Տէրտէրանի (ծն. 1901 թ.) պատմելով, «Երբ մնացած կիները կը հաւաքեն հայոց գերեզմանոցը, աքսորելու համար, գայմագամը, ինքը անձամբ կ'երթայ հոն ու կ'ըսէ. «Ով որ Ամերիկա ամուսին, եղբայր ունի, այս կողմը թող անցնի, որ Ամերիկա ղրկեմ»: Միամիտ կիները կը հաւատան: Կը տանի ձորը եւ ինք անձամբ կը մերկացնէ, վրանին դրամ կը փնտռէ ու քիչ վերջ դարձեալ կարաւանին կը միացնէ»:[13]

Ուրֆացի Մարի Պարտագճեանը (1915 թ. մինչեւ 20 տարեկան) պատմում է, որ «Կարաւանին մէջէն գեղեցիկ եւ հարուստ կիները անջատեցին, իբր թէ պիտի վերադարձնէին Ուրֆա, բայց դժբախտաբար կողոպտելէ եւ լկելէ ետք գնդակահարեցին»: Ապա շարունակում է. «Ատրեամանի մէջ զինուորներ եկան եւ ըսին մեզի. «Դրամ տուէք որ ձեզ ազատենք»: Խեղճ կիները իրենց մէջ ոսկեղէններ հաւաքելով տուին, բայց թէ ոսկեղէնները առին եւ թէ չատերը գնդակահարեցին»:[14]

«Զարդարար չէէն Մահմուտ պէկը» պատմում է, թէ Բաս իւլ Այնում 2000 հայերին «Տէր-Զօրի Միւթասարըֆը իրենց ներում խոստացած էր, եթէ իբր փրկանք 10.000 ոսկի հանգանակութիւն մը ընելով իրեն յանձնէին, ճեմալ փաշային համար: Դրամը հայթայթուած էր եւ իրապէս Միւթասարըֆը Հալէպ մեկնած էր: Նոր վերադարձած էր առանց ներում բերելու: Բէյզէէնկը 10.000 ոսկին ինքը կլլեց: Այս անգամ իրենցմէ կը պահանջէր 5000 ոսկի ու իրենց ապրանքները: 5000 ոսկի չկար, բայց կեավուրները իրենց ապրանքները տրամադրած էին, ներում ստանալու համար, ի՞նչ տխմարութիւն...»:[15] Սրան յաջորդում է 2000 հոգու սպանութիւնը:

Սեբաստացի Արմենուհի Թուլումճեան-Հայրապետեանը (չորս զաւակների մայր) տարագրութեան ճանապարհի մասին պատմում է. «Կ'անցնէին օրեր, շաբաթներ, ամիսներ, մէկ կողմէն կողոպտուիլը, միւս կողմէն կիզիչ արեւը, անօթութիւնն ու ծարաւը: Ախ, ծարաւը կը լլկէր մեր էութիւնը: Եւ ահա օր մը ալ արիւնարբու ոստիկանները ափսէ մը դրին մէջտեղ եւ ըսին մեզի. «Ով որ այս ափսէին մէջ հնչիւն ոսկի մը կը ձգէ, միւս կողմը պիտի անցնի, զանոնք պիտի առաջնորդենք ջրաբեր վայրերէ, հովասուն ձորերէ, հակառակ պարագային հոս կը մեռնիք»: Մենք թշուառներս հարկադրուած տուինք ոսկիները եւ անցանք միւս կողմ: Ափսէին վրան գոյացաւ ոսկիներու դէզ մը, զորս թուրք ոստիկանները բաժնեցին իրենց մէջ եւ մեզ դարձեալ առաջնորդեցին նոյն կիզանուտ աւազներու մէջէն բոկոտն եւ ծարաւ»:[16]

Ալպիսթանցի Յովհաննէս Սարաֆեանը (ծն. 1908 թ.) պատմում է, որ աքսորավայրում մի արաբ մարդ իր մօրը դիմում է առաջարկով. «Ես ձեզմէ դրամ չեմ ուզէր, ամէն օր հաց կը բերեմ ձեզի, եթէ այս տղան ինծի տաք»: Մայրս ըսաւ. «... կու տամ այս զաւակս քեզի, միայն թէ մեղքը վզիդ, լաւ հոգ պէտք է տանիս. առ քեզի 20 օսմ. ոսկի, այս զաւկիս կեանքը փրկելու համար պահած էի, քուկդ թող ըլլայ թէ դրամը եւ թէ զաւակս» ըսելով ձեռքէս բռնեց ու աղի արցունքներ թափելով յանձնեց զիս արաբին...»: Յովհաննէսը միանգամից դառնում է «Հիւսէյն», անցնում է բազմաթիւ տառապանքների միջով, աշխատում է իբրեւ հովիւ, ապա երկրագործ ու 15 տարեկանում առաջարկ է ստանում ամուսնանալու իր նոր «քոյրերից» մեկնումէկի հետ (ա-

13 Նոյն տեղում, 297:

14 Նոյն տեղում, 187:

15 Նոյն տեղում, 235:

16 Նոյն տեղում, 78-79:

ռանց գլխագին վճարելու պայմանի), մերժման պարագայում հայրացուն խոստանում է «կտոր կտոր» անել իրեն:[17]

«Տիարպէքիրի վերջին կոտորածը» բաժնում նկարագրւում է, որ քաղաքի 635 երեւելի անձանց (բնութագրւում են որպէս «քաղքին հայութեան լաւագոյններ») Մուսուլ աքսորելու ճանապարհին, Տիգրիսի գետանցման առթիւ «եաւէր Շաքիր»-ն առաջարկում է մի քանի «բարձր դիրքի տէր հայեր»-ին, թէ «ճանապարհը վտանգաւոր կը տեսնեմ, խօսեցէք աքսորականներուն որ իրենց դրամները բերեն ձեզ, ահաւասիկ պայուսակ մը, լեցուցէք մէջը, իւրաքանչիւրի անունն եւ յանձնած դրամը նշանակեցէք... Այս վտանգաւոր վայրէն անցնելուս պէս, իւրաքանչիւրի դրամն իրեն թող յանձնուի նորէն»: Այս կերպ այսինքն քրդերի հնարաւոր յարձակումներից եւ աքսորականների կեանքին սպառնացող վտանգներից փրկութեան խոստման դիմաց հաւաքւում է 6000 ոսկի: Յաջորդիւ բոլոր 635 հոգուն մաս առ մաս տանում են ձորի մէջ սպանում, գումարն էլ գրպանում:[18]

Վերը յիշուած Հողէ գիւղացի Մելքոն Տէրտէրեանը պատմում է, որ քրդական գիւղերի շրջապատում գտնուող իրենց գիւղը որպէս պաշտպան էր ընտրել Տէմիրճի քրդաբնակ գիւղը. «Ամէն Հողեցի ընտանիք այդ գիւղին քուրդի մը պաշտպանեալն էր: Հողեցին տարին երեք-չորս անգամ կ'երթար քուրդերու խոտը կը քաղեր, փայտը կը կտրէր. բացի իր տուած նուէրներէն»: Հայերի ջարդը կազմակերպելու հրամանը իրագործելու էր Տէմիրճի գիւղի մոլլայի եղբայրը. նա համոզում է հողեցիներին իրենց ապրանքներով փախչել Տէմիրճի, որտեղ, սակայն, նրա իսկ հրամանով երկու օր անց սկսւում է հայերի կոտորածը. «Ու ամէն քուրդ իր պաշտպանեալ հայ ընտանիքը գետեզը տանելով սպաննեց: Անոնց մէջ էին եւ վեց ամսուան ամուսնացած եղբայրս. մեր ընտանիքէն ինը հոգի»:[19]

* * *

«Փրկութեան» մէկ այլ ձեւ էր փրկութեան խոստումը կամ դրան ուղղուած գործողութիւնը, դրա իրականացումը որոշակի ժամանակահատուածում, եւ ապա, «փրկողների» համար ռիսկի իրական կամ թէական գործօնի մէջտեղ գալու պարագայում դրա դրժումը, որին, որպէս կանոն, յաջորդում են բռնութիւններ կամ այլ բնոյթի դժուարութիւններ.

Սղերդցի Սրբուհի Մուրատեանը պատմում է, որ առաջնորդական տեղապահի նահատակութեանը յաջորդում է շուկայում «առանց տարիքի խտրութեան իբր գործաւոր զինուորներ կը հաւաքեն 12 տարեկանէն վեր եղող այրերը եւ կը բանտարկեն», որին հետեւում է նրանց բոլորի սպանութիւնը: Ապա շարունակում է. «Հայերը երբ իբր գործաւոր-զինուորներ կը հաւաքէին, բաւական թուով մարդիկ միջոցը գտած էին փախչելով ապաստանիլ իրենց թուրք բարեկամներուն քով, օրական երկու ոսկի վճարելով անոնց»: Սակայն ժամանակ անց. «... Այրերուն ջարդէն 15 օր ետքը մունետիկ մը ամբողջ քաղաքին մէջ կ'ազդարարէր հետեւեալը. «Հայերը պէտք է գաղթի պատրաստուին վաղ առաւօտ ճամբայ ելլելու համար»: Քիչ ետքը երկրորդ մունետիկ մը եւս կը յայտարարէր. «Ով որ հայ պահած է իր տան մէջ, պէտք է դուրս ձգէ, հակառակ պարագային տունը հրոյ ճարակ պիտի ըլլայ»: Ուստի, այս յայտարարութեան վրայ, թուրքերը իրենց պահած այրերը դուրս ձգեցին որոնք ճարահատ կնոջական տարազով ծպտուած, խառնուեցան կարաւանին, որ մոտաւորապէս իբր առաջին կարաւան 5000 հոգիէ կը բաղկանար...»:[20]

17 Նոյն տեղում, 110-125:

18 Նոյն տեղում, 222-226:

19 Նոյն տեղում, 288-290:

20 Նոյն տեղում, 130-131:

Այսինքն, հնարաւոր փրկութեան գործօնի օգտագործումը դառնում է «փրկողների» հարստանալու միջոց:

* * *

Առանձին քննութեան է արժանի երեխաների «փրկութեանն» ուղղուած գործողութիւնների դիտարկումը: Երեխաների փրկութեան հարցն ունի մի քանի առանձնայատկութիւններ. (ա) երեխաներն ամբողջութեամբ անպաշտպան են, (բ) նրանք, յատկապէս եթէ առանց ծնողների են, արագ են ենթարկւում ուծացման, (գ) երեխաներին յաճախ յանձնարարում են աշխատանքներ, որոնք նրանց ուժերից վեր են եւ կամ իրականացւում են ուժերի դերագոյն լարումով եւ այլն:

Երեխաների «փրկութեան» գործընթացի մէջ կարելի է առանձնացնել մի քանի տիպի «լուծումներ», այդ թւում ա) երեխայի «փրկութիւն», որին յաջորդում է նրա վաճառքը, բ) երեխայի «փրկութիւն», որին յաջորդում է նրա անուանափոխութիւնը, կրօնափոխութիւնը այսինքն ազգային ինքնութիւնից զրկումը, ապա եւ օգտագործումը որպէս ձրի աշխատուժ, գ) երեխայի «փրկութիւնը» նրա տնտեսական շահագործման նպատակով:[21]

Երեխաների «փրկութեան» մէկ այլ, բաւականին ծանր ձեւ էր, երբ երեխաներին «կամովին» յանձնում էին արաբի, թուրքի, քրդի, չէչէնի: Դիտարկենք ասուածը օրինակներով, որպէսզի պարզ լինի այս «կամովին» արարքների իրական պատճառները.

Բրուսայի շրջանի Եէնիճէ գիւղից վերապրող Վերժին Թիկիրեանը (ծն. 1890 թ., 7 տարեկան երեխայի մայր) պատմում է, որ աքսորի ճանապարհին, Էրէյլիում «մեր պաշարը հատած էր, սկսանք ծախել ինչ որ ունէինք իբր ոսկեղէն: Անկողին, վերմակ կամ հագուստի ծրարներ կը թալանուէին ամէն օր, թշուառութիւնը տիրեց մեր վրայ: Հոս, այրերը զատեցին կիներէն, տարին ու չվերադարձուցին: Օր մը ալ դեռատի աղջիկները զատեցին տարին եւ զանոնք ալ չվերադարձուցին, իսկ մնացեալ կիներն ու երեխաները քշեցին Պապ: Հոն անօթի, ծարաւ եւ մերկ մնացած էինք, ասոնց վրայ կը բարդուէր Թիֆուսի համաճարակը: Ես ալ հիւանդացայ, աղջիկս մնաց մէջտեղ, խորհելով թէ ալ մահը անվրէպ էր ինձ համար, նոյն միջոցին ինձ ներկայացող արաբի մը յանձնեցի աղջիկս յօժար կամքով»:[22]

Կարմուրճցի (Եդեսիոյ շրջան) Յովհաննէս Մուրթաֆեանը (ծն. 1898 թ.) պատմում է, որ Բագդայից Տէր-Զօր ճանապարհին «Մեր ճամփորդութեան ընթացքին քանի մը բաղխումներ ունեցանք գողերու հետ: Գիշերները հսկելու համար հերթով կը քնանայինք: Երբ մեզ առաջնորդող ոստիկանին հարցուցինք թէ «ինչո՞ւ չէք պաշտպաներ մեզ», պատասխանեց. «Անշուշտ պիտի կողոպտեն, պիտի մորթեն, դուք ձեզ պաշտպանեցէք, եթէ կրնաք»: Վերջապէս հասանք Տէր-Զօր: Գիշեր մը միայն մնացինք հոն: Մեր մէջէն ընտանիք մը իր աղջիկը միւտիւրին տուաւ, ասոր վրայ սկսան մեզմէ ալ աղջիկ ուզել»:[23]

Կարմուրճցի Աննա Մուրթաֆեանը (1890 թ. ծն., երկու տղաների՝ 6 եւ 3 տարեկան, մայր) պատմում է, որ Տէր-Զօրից ու Սուվարից անդին, «Ուռած եւ ճաթրտած ոտքերով քալելը անկարելի դարձած էր, բայց անգթորոյն թուրք ոստիկաններու հարուածին տակ պէտք էր քալէինք», արդէն Ապտուլ-Ազիզի անապատում, «Կեանքիս այս նեղ պայմաններու տակ, երբ կը քաշկռտուէինք եւ այլեւս մահը անվրէպ էր մեզ

21 «Լուծումների» մի մասը դիտարկուել է հետեւեալ յօդուածում. **Harutyun Marutyan**, *'Rescued or Genocided?'—The Transfer and Assimilation of Children During the Armenian Genocide*,- in The Silenced Crime: Forcible Child Transfer During the Armenian Genocide, edited by Edita Gzoyan, 185-208. Brill-Schoningh, 2025.

22 Նոյն տեղում, 45-46:

23 Նոյն տեղում, 83:

համար, առաւօտ մը կին մը եկաւ եւ որդեգիր մը պահանջեց մեզմէ: Անդրանիկ զաւակս Արուշը [Ցարութիւն] որ թշուառութենէ ու անօթութենէ նիհարցած եւ ճղճիմ վիճակ մը ստացած էր, մահէն ազատելու յոյսով յանձնեցի իրեն, խեղդելով իմ մէջս մայրական զգացումը, որ կը բողոքէր այս արարքին դէմ»: Արուշը (արաբական անունը Խալաֆ) վեց ամիս շարունակ փորհարութիւն է ունենում, մայրացուն նրան տանում-նետում է մի փոսի մէջ, ասելով. «Քանի պիտի մեռնիս, գնա հոն մեռիր»: Ի վերջոյ խղճալով երեխային, արաբ կինը նրան հետ է վերցնում: Տարիներ անց Աննան գտնում է արաբախօս Արուշին, սակայն մայրացուն 10 օսմ. ոսկի է ուզում երեխայի համար: Արուշը, այնուամենայնիւ, միաւորւում է մօր ու քրդախօս դարձած եղբօր հետ:[24]

Ռոտոսթոցի Նազիկ Գաբատանեանը (ծն. 1903 թ.) պատմում է, որ Մեսքենէում վախճանւում են նրա ծնողները: «Մնացինք քոյր եւ եղբայր ... անտէր ու անպաշտպան քշուեցանք եկանք Համամ որ շատ հեռու չէր Մէսքէնէէն: Մեր հոգիէն զատ ուրիշ բան չունէինք, մնացինք վերջին ծայր թշուառ եւ անօթի: Եղբայրս յուսահատ, յանձնեց զիս արաբի մը, հոն բաժնուեցանք քոյր եղբայր իրարմէ եւ այլեւս իր մասին ոեւէ տեղեկութիւն չունեցայ»: Մէկ ամիս անց այդ արաբն իրեն ծախում է մէկ ուրիշ, կին ունեցող արաբ մարդու: Վերջիններս նրան ծախում են մի երրորդ արաբի:[25]

Ուրֆացի Ովսաննա Պէրպէրեանը, որ 1915 թ. ունէր չորս զաւակ եւ ամուսինն էլ նախորդ ամուսնութիւնից ունէր երկու զաւակ՝ պատմում է. «1915ի տարագրութենէն առաջ ամուսինս իբր գործաւոր զինուոր տարին եւ ալ չվերադարձաւ: Կիներն ալ տարին Միլլէթ-Խան ըսուած պանդոկը ուր մնացինք արգելափակուած: Շատ սոսկալի վիճակի մը մատնուած էինք, ծեր, երիտասարդ, մանուկ, հարիւրաւոր հոգի խճողուած, անօթութիւն, աղտոտութիւն: Միեւնոյն ժամանակ կառավարութիւնը բացած էր որբանոց մը եւ որբեր կը հաւաքէր. ես ալ աչքի առջեւ ունենալով վիճակիս անստուգութիւնը, Սարգիսն ու Ռեբեկան [ամուսնու երեխաները] իբր մի քիչ խելահասներ յանձնեցի որբանոց: Քանի մը օր ետքը մնացեալ չորս զաւակներովս որոնք տակաւին շատ փոքր էին, տարագրուեցայ առանց ոեւէ պատրաստութեան: Զորսն ալ քալելու անկարող, հազիւ թէ քանի մը օր քալեցինք, չքաւորութիւն եւ յոգնութիւն պարտադրեցին զիս որ երկու զաւակներս ալ Լեւոնն ու Եղիսաբեթը յանձնեմ թուրքերուն, այնպէս որ Ուրֆայէն մինչեւ Թէլ Հալիպ չորս զաւակներէս բաժնուեցայ:[26]

Պանտրմացի Եպրուհին (արաբական անունը՝ Զահրայ Մկրտիչ, ծն. 1905 թ.) պատմում է, որ Շէյտտէտիում, բացօթեայ գաղթակայանում, մայրը մահանում է: «Հետեւեալ օրը երբ հայրս վերադարձաւ, շատ յուզուեցաւ եւ լացաւ աղիողորմ արցունքներ թափելով: Մենք ալ, երկու քոյր ու եղբայր մը, տակաւին անչափահաս չափազանց յոգնած, քալելու ի վիճակի չէինք: Ուստի երբ Շէյտտէտիէն պիտի վերցնէին մեր կարաւանը, հայրս մեր ունեցած բոլոր գոյքերով միասին երեքս ալ յանձնեց Զէյէն ընտանիքի մը խնամքին, որպէսզի վերադարձին առնէ մեզ, ինք ձեռքը ցուպով մը բաժնուեցաւ մեզմէ: Ի զուր սպասեցինք իր վերադարձին: Ետքը իմացանք որ կարաւանը ճամբան ջարդած էին»:[27]

Իզմիթցի Ռեբեկա Բըվէճեանը (արաբական անունը Թէրֆէ, ծն. 1907 թ.) պատմում է. «Բայց խեղճ հայրս կերած ծեծին [երկու օր շարունակ, բանտում] հետեւանքով ճամփորդութեան առաջին օրն իսկ մե-

24 Նոյն տեղում, 98-108:

25 Նոյն տեղում, 136:

26 Նոյն տեղում, 151:

27 Նոյն տեղում, 159-160:

ռաւ: Մենք շարունակեցինք նահատակութեան ճանապարհը եւ տաժանելի ուղեւորութեամբ հասանք Խապուր գետին եզերքը. Ես այն ատեն հազիւ 7 -8 տարեկան, չեմ յիշէր նոյն իսկ մեր ճամփորդութեան գլխաւոր դէպքերը: Երբ Խապուր գետին եզերքը հասանք, արդէն մնացած էինք ցնցոտիներու մէջ, աղտոտ եւ թշուառ: Մայրս յուսահատ մեզ բաժնեց արաբներուն եւ ինք քանի մը օր ետքը մեռաւ: Զիս որդեգրողը իր վրանը տարաւ զիս, քոյրերս եւ եղբայրներս ի՞նչ եղան, ո՞ւր մնացին չեմ գիտէր: Իրենց մասին ոեւէ տեղեկութիւն չեմ կրցած ստանալ: Երբ չափահաս աղջիկ եղայ, զիս որդեգրողը ամուսնացաւ ինծի հետ, ունեցայ երեք մանչ եւ երկու աղջիկ զաւակ...»:[28]

Ուրֆացի Սուլթան Թօփեանը պատմում է. «Մեզի ընկերացած էին մօրաքոյրս եւ իր աղջիկը Սիրանոյշ որ շատ գեղեցիկ էր: Երբ Սուվար վերադարձանք, մեր գոյքերը թալանուած էին. Մնացինք անօթի չոր գետնի վրայ. Գիշերը պետէլի արաբ մը մօտեցաւ մեզի եւ ըսաւ. «Մեղք է ձեզի որ մորթուիք, եկէք այս աղջիկը (Սիրանոյշը ակնարկելով) ինծի տուէք»: Մայրս պատասխանելով ասոր ըսաւ. «Մենք իրարմէ չենք բաժնուիր, եթէ բոլորիս կեանքն ալ փրկես այս աղջիկը կու տամ քեզի»: Արաբը հաւանեցաւ, բայց ուշադրութիւն չդրաւելու համար նախ տարաւ մեզ, երեք աղջիկներս, ետքն ալ մայրս եւ մօրաքոյրս պիտի տանէր: Հետեւեալ օրը երբ զանոնք պիտի բերէր մեր քով, երկուքն ալ մորթուած էին: Ես ու Սիրանոյշ ամուսնացանք երկու եղբօր հետ, իսկ [17 տարեկան] Խանում քոյրս ալ անոնց ազգականներէն պէտուին արաբի մը հետ»: [29]

Վերոբերեալ վկայութիւնները փաստում են, որ այո՛, հայ ծնողներն ու հարազատները կամովին յանձնել են երեխաներին, նաեւ պատանիներին ու երիտասարդներին օտարներին: Հարցի լիարժէք պարզաբանման համար անհրաժեշտ է յստակ արձանագրել, թէ ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքներում է տեղ գտել նման «կամաւոր քայլը»: Բերուած նիւթի պարզ վերլուծութիւնները փաստում են հետեւեալը. ա) յանձնման պահին որոշում կայացնողները եւ «յանձնուողները» գտնուել են օրհասական վիճակում սոված, ծարաւ, գերյոգնած, ցնցոտիներով, զուրկ ապրուստի տարրական միջոցներից, առանց ապագայի տեսլականի, մահուան անմիջական սպառնալիքի տակ, բ) որոշումները կայացուել են ֆիզիկական հաշուեյարդար տեսնելու ուղղակի եւ անուղղակի սպառնալիքի տակ, գ) «յանձնելու» որոշում կայացնելով մարդիկ յոյս են ունեցել, որ իրենց երեխաները/հարազատները գոնէ ֆիզիկապէս ողջ կը մնան, չեն մահանայ սովից, ծարաւից, չեն սպանուի սրից ու հրից, դ) «կամովին» յանձնողները յոյս են փայփայել, որ իրենց կենդանի մնալու պարագայում անպայման կը գտնեն իրենց երեխաներին, է) երբեմն «ընդունող կողմին» փոխանցել են վերջին նիւթական միջոցները (դրամ, հագուստ), այդկերպ նրանց, իրենց պատկերացմամբ, «պարտաւորեցնելով» հոգ տանել երեխաների մասին:

Ի՞նչ մօտիւացիա է առաջնորդել երեխաներ, պատանիներ, երիտասարդներ «կամովին» վերցնողներին, *որոնց երբեմն վերապրածներն անուանում են «որդեգիրներ»: Փորհարութիւն ունեցող Արուշին մայրացուն նետում է փոսի մէջ մահանալու, տարիներ անց վաճառում է նրա իսկ մօրը 10 ոսկով: Նազիկ Գաբտանեանին ծախում են մի արաբի, սա էլ երկրորդին (որը կին ունէր), սա էլ երրորդին: Ռեբեկա Ըվէճէանին տալիս են արաբական անուն, ապա եւ նրան որդեգրողը, ժամանակ անց, ամուսնանում է նրա հետ: Այսինքն, «որդեգրում» երեւոյթը միայն անուանական է այդպէս կոչւում, իրականում «որդեգրողն» առաջնորդւում է*

28 Նոյն տեղում, 165-166:

29 Նոյն տեղում, 206-207:

ոչ թէ բարեսիրական/ալտրուիստական մոտիւներով, այլ խիստ որոշակի շահ է հետապնդում. սեռական հասունացումից յետոյ ամուսնանալ որդեգրուածի հետ, այն է՝ հասուն տարիքում երիտասարդ կին ունենալ, առանց գլխագին վճարելու որեւէ մէկին: Սուլթան Թօփեանը ճարահատեալ է ամուսնանում արաբի հետ, ունենում է հինգ երեխայ, սակայն իր կեանքը բնորոշում է որպէս «ողջ նահատակութիւն», քանի որ «վերը Աստուած եւ վարն ալ ես միայն գիտեմ թէ ինչպիսի՜ տառապանքներով եւ ինչպիսի՜ զրկանքներով պայքարեր եմ անողոք ճակատագրի դէմ»: [30] *Սուլթանի քոյր Խանումը շատ աւելի գոհ է իր արաբ ամուսնուց եւ ընդհանուր վիճակից, սակայն, թերեւս, արաբացուած է: «Հիւսէյն» դարձած 15-ամեայ Յովհաննէս Սարաֆեանը «կտոր կտոր» արուելու սպառնալիք է ստանում իր «հայրացուից», եթէ չամուսնանայ նրա աղջիկներից մեկնումէկի հետ: Մէկ այլ պատմութեան մէջ որդեգրուած հայուհին դիտւում է որպէս ապագայի մէջ ներդրուած կապիտալ, ում կարելի է պարտքի փոխարէն տրամադրել պարտապանին:*

Ինքնափրկութեան փորձերը

Նման պայմաններում, երբ որեւէ մէկը չէր մտածում ծանրագոյն իրավիճակներում յայտնուած հայ մարդկանց սպանուելուց փրկելու մասին, ստիպուած քայլեր են ձեռնարկում իրենք՝ հայ մարդիկ: Սա կարելի է անուանել «գոյատեւման ռազմավարութիւն», «ողջ մնալու արուեստ», բայց նաեւ «ինքնափրկութիւն»: Սա եզրոյթների, բառերի մանիպուլիացիա չէ. բերուելիք օրինակները շատ ուղղակիօրէն ցուցում են, որ գործ ունենք էթնիկ պատկանելութեան հիմքով տոտալ ոչնչացման ցեղասպանութեան դէմ անհատի, անհատների խմբի պայքարելու ու ողջ մնալ փորձելու երեւոյթի հետ:

Բազմիցս նշուել է, որ օսմանեան իշխանութիւնների համար թիրախային խումբ էին հայ տղամարդիկ, ընդհանրապէս արական սեռը, շատ դէպքերում առանց տարիքային խտրականութեան: Եւ դա ոչ միայն բռնութիւններին հնարաւոր դիմադրութեան տեսանկիւնից, այլ նաեւ այն պարզ իրողութեան պատճառով, որ ազգի գոյութեան շարունակականութիւնն ապահովելու համար անհրաժեշտ են տուեալ ազգի արական սեռի ներկայացուցիչներ: Չկան նրանք զանգուածային բռնաբարութիւնների եւ զանգուածային բռնի ամուսնութիւնների միջոցով ազգի աստիճանական ուծացման դերն իրենց վրայ են վերցնում այդ տղամարդկանց սպանողները, այդ կերպ մի քանի տարուայ ընթացքում ձեւաւորելով այլէթնիկ ընդհանրութեան ձեւափոխուելու եւ այլէթնիկ ընդհանրութեան հետ ձուլուելու ֆիզիոլոգիական-մշակութային հիմքերը: Հարազատի կեանքը փրկելու զգացումներից զատ այս բանի գիտակցումը թերեւս կար նաեւ կանանց մէջ, որոնք փորձում էին ամէն կերպ օժանդակել արական սեռի ներկայացուցիչներին ողջ մնալու հարցում: *Աքսորի, անընդհատ շարժման պարագայում թաքստոցի հնարաւորութիւն չկար, այդ պատճառով էլ առաջին հերթին դիմում էին արտաքինը ձեւափոխելուն:*

Դիմենք օրինակներին:

Սուվարում, երբ հաւաքում են գրագէտ «կարդալ-գրել» իմացող տղամարդկանց պոտենցիալ մտաւորականներին եւ «ծայրը գունտ երկաթ գաւազաններով չարաչար ծեծեցին եւ կիսամեռ վիճակով գլտորեցին փոսի մը մէջ», «Ասկէ ետքը այրերը սկսան կուրծքին վրայ կեղծ ծիծեր ձեւացնել եւ կնոջական հագնիլ: Բայց, աւաղ, այդ սեւ օրերուն իսկ մեր ազգին մէջ գտնուեցան մատնիչներ, որոնց ցուցմունքներով ու դարձեալ ձերբակալուեցան»:[31]

30 Նոյն տեղում, 207:

31 Նոյն տեղում, 64:

Հանդիպում են վկայութիւններ Սղերդից. «այրերը ... ճարահատ կնոջական տարազով ծպտուած»,[32] բայց եւ «Այն այրերը՝ որոնք ծպտուելով խառնուած էին կարաւանին մէջ, հակառակ իրենց ըրած զգուշութեան, ճանչցուեցան ոստիկաններէ եւ գնդակահարուեցան»:[33] Բաշկալէում տեղահանութեան ժամանակ «Այրերը կնկան հագուստով ծպտուեցան: Հազիւ երկու օրուան ճամբայ կտրած էինք, գաղտնիքը երեւան ելաւ: Մեր մէջէն զատուած էրիկմարդոցմէ մէկ քանի հարիւրը մեր աչքերուն առջեւ գնդակահարեցին»:[34] Նոյն մեթոդաբանութեամբ մայրերը փորձում էին փրկել երեխաներին. ալպիսթանցի եօթ տարեկան, երկար մազեր ունեցող (ուխտել էին Երուսաղէմ տանել եւ այնտեղ կտրել) Յովհաննէս Սարաֆեանի մայրը «կանխամտածութեամբ դրած էր ականջներուս օղ եւ ինծի ալ հագցուցած էր աղջկան հագուստներ, ճամփորդութեան պարագային զիս աղջիկ ձեւացնելու համար»:[35] Սեբաստացի, չորս երեխաների մայր Արմէնուհի Թուլումճեան-Հայրապետեանը պատմում է, որ քարաւանն առաջնորդող ոստիկանները «եօթը տարեկանէն վեր եղող մանչերը հաւաքելով կը վառէին, կը դաշունահարէին եւ զանազան սահմռկեցուցիչ մահերով կը մահացնէին «խընզըր կեաւուրլար» յանկերգը իրենց բերնին: Ճարահատ, աղջկան հագուստներով կը ծպտեցնէինք մեր մանչերը, երեսնին կը մրոտէինք եւ մայրական հնարամտութենէ բխած հազար ու մէկ միջոցներ կը խորհէինք զանոնք պարտկելու համար»:[36] Կովտունից Դշխուհի Ալեքեանի (ծն. 1909) մէջ տպաւորուել է գետնանցումի ժամանակ տեղ գտած մի դրուագ. «Գտեր էին աղջկայ հագուստով 11 տարեկան տղայ մը զոր նետեցին գետ: Խեղճ տղան շախտուրին ետեւի պատին կառչելով կը փորձէր ազատուիլ, բայց թուրքերը հէք տղան հրեցին հոսանքին մէջ»:[37]

Աքսորի ժամանակ անպակաս էին առեւանգումները: 1915 թ. 25 տարեկան կարմուրճցի Աննա Մուրթաֆեանի պատմելով, Ռաքքայում «հէք մայրս անքուն կը հսկէր մեր վրայ որպէսզի գիշերով առեւանգում չպատահէր» (էջ 100):[38] Ու քանի որ առեւանգում էին նախ եւ առաջ գեղեցիկ աղջիկներին, հարկ էր նրանց տգեղացնել: Այնթապցի Նուրիցա Թիւթիւնճեանը պատմում է, որ «Լուսահոգի հայրս ամէն առտու յարդը կը խաշէր եւ այդ ջուրով մեր դէմքը կը լուային որպէսզի տգեղնային»:[39] 12-ամեայ ամասիացի Ռեքինա Նասիպեանը պատմում է. «Կին ու աղջիկ կ'առեւանգէին: Մայրս մեր յօնքերը եւ թարթիչները կտրեց տգէղցնելու համար»:[40]

Ցեղասպանութիւնից առաջ հայոց մէջ շատ տեղերում գոյատեւում էին գերդաստանային յարաբերութիւնները, այսինքն՝ բազմասերունդ մեծ ընտանիքները, չնայած գերիշխողն աստիճանաբար դառնում էր երկսերնդային ընտանիքը: Սակայն քանի որ պարբերական սպանութիւնների հետեւանքով դրանք շատ արագ ձեւափոխւում-նօսրանում էին, հարկ էր ստեղծել նոր սոցիալական յարաբերութիւններ՝ վերստին ազգակցական հիմքի վրայ: *Եթէ դա էլ հնարաւոր չէր լինում հարազատների սպանութեան պատճառով, միեւնոյն է, գերադասելի էր միանալ որեւէ ընտանիքի, քան միայնակ կրել աքսորականի կամ համակենտրոնացման ճամբարում գոյատեւելու բեռը: 1915 թ. 16 տարեկան բրուսացի Վարդուհի Պաղտասարեանը պատմում է. «24 ժամէն պէտք էր պատրաստուէինք... Ո՞ւր պիտի երթայինք. որո՞ւ ապաւինէինք. հայրս բանտը կը*

32 Նոյն տեղում, 131:
33 Նոյն տեղում, 132:
34 Նոյն տեղում, 240:
35 Նոյն տեղում, 112:
36 Նոյն տեղում, 78:
37 Նոյն տեղում, 281
38 Նոյն տեղում, 100:
39 Նոյն տեղում, 144:
40 Նոյն տեղում, 330:

կարծէինք. արդէօք ո՞ղջ մնացած էր: ... Հոգիով եւ մարմինով շուարումի եւ անորոշութեան մատնուած ինչ ընելիքնիս չէինք գիտէր: Ճամբորդութիւնը երկար էր եւ մենք մայր ու աղջիկ էինք միայն. ուստի խորհեցանք մեզ մօտէն ուղեկից եւ ցաւակից ըլլալիք մէկը ունենալ մեզի հետ եւ մօրս մօրեղբօր աղջիկը Ֆիլորը իր պզտիկ աղջիկ զաւակովը միասին առինք եւ չորս հոգիէ բաղկացեալ պզտիկ խմբակ մը կազմեցինք»:[41] *Իզմիտցի Եպրաքսէ Մելգոնեանը պատմում է. «Դժբախտաբար մեզ փոխանակ Հալէպ տանելու, տարին Ռաս-էլ-Այն: Թշուառութեան հետեւանքով ամուսինս եւ զաւակս մեռան հոս, ես մնացի բոլորովին առանձին, ընկերացայ հայ ընտանիքներուն»:*[42]

Աքսորի ճանապարհին ինքնափրկութեան կարեւորագոյն գրաւականներից էր որոշակի ֆինանսական միջոցների տիրապետումը: *Գումարի առկայութիւնը ողջ մնալու երաշխիք չէր, բայց գոնէ բռնութեան բացակայութեան պարագայում գոյատեւման անհրաժեշտ պայմաններից էր: Միեւնոյն ժամանակ աքսորի եւ համակենտրոնացման ճամբարի պարտադիր ուղեկիցներից էին ուղղակի եւ անուղղակի բռնութեան սպառնալիքի տակ գումարների «կամաւոր» շորթումը, մթերքի բաղմակի անգամ թանկ գներով ձեռքբերումները, վերջապէս թալանն ու սպանութիւնները: Գումարը պահելու միջոցներից էին աքսորի այսինքն բռնութեամբ անորոշ ժամանակով ճամփորդական պայմաններում գտնուելու պարագայում անհրաժեշտ/պարտադիր տարրերի վերմակների մէջ կարելը: Առաւել ապահով էր համարւում այն* մարմնի վրայ *կրելը դրամները կարում էին ներքնազգեստներում, երեխայի տաբատի, գօտիների մէջ: Ծայրայեղ միջոցներից էր գումարը* մարմնի *մէջ պահելը ոսկեդրամ(ներ)ի կուլ տալու ճանապարհով: Կիւրինցի Թրուանտայ Սօլաք Մինասեանը պատմում է, որ քարաւանով քաղաքից դուրս գալուց առաջ, «Մայրս կարգ կարգ մեր ոսկիները վերմակի մը մէջ տեղաւորած էր. նաեւ մեր ներքնազգեստներուն մէջ շարք շարք կարուած էին ոսկիներ եւ զարդոսկիներ: Նոյնպէս գօտիներու մէջ ոսկիներ տեղաւորելով մեր մէջքը կապած էինք, այնպէս որ ընտանիքի բոլոր անդամները ոսկիներով բեռնաւորուած էինք»:* [43] *Սեբաստացի Արմէնուհի Թուլումճեան-Հայրապետեանը, իրենց ուտելիքի թալանուելուց յետոյ, «Քովս գտնուած դրամէն տասը օսմ. ոսկի զաւկիս, [12-ամեայ] Եղիային տափատին մէջ կարեցի եւ պատուիրեցի որ փախչի...»:*[44] *Ուրֆացի Խանում Թօփէեանը պատմում է, որ Շէտտէտիէում «Ուտելիք չի կար եւ ոչ ալ մէկերնուս մտքէն կ՚անցնէր ուտելիքի վրայ մտածելու: Քուրջէ վերմակի մը ծայրը կարուած երկու ոսկի ունէինք, միակ յոյսերնիս: Գիշերով վերմակին հետ ոսկիներն ալ գողցան»:*[45]

Թւում էր, թէ ամենաապահովը պէտք է լինի ոսկեդրամը մարմնի *մէջ պահելը այն կուլ տալու ձեւով: Ցամենայն դէպս ինքնափրկութեան բնազդը, նաեւ հաշուարկը մղում էր նման քայլերի: Սակայն դա էլ չէր փրկում, յաճախ ընդհակառակը դաժան մահուան պատճառ էր դառնում, իսկ մահուանից յետոյ դիակի խոշտանգման: Այսպէս, Ռեքինա Նասիպեանը պատմում է, թէ Ամասիայից չորս ամիս քայլելով հասնում են Հալէպ. «Դրացիները գիտէին, որ մայրս ոսկի կուլ տուած է ճամբան: Բերնէ բերան կը լսուի: Գիշերը, երբ երկու քոյր մօրս փաթթուած կու լայինք, երկու թուրք ներս մտան, ըսին թէ բժիշկ են եւ դանակներով*

41 Նոյն տեղում, 180:

42 Նոյն տեղում, 150:

43 Նոյն տեղում, 70:

44 Նոյն տեղում, 78:

45 Նոյն տեղում, 211:

մօրս փորը ճեղքեցին: Յետոյ հեռացան, ըսելով թէ ոսկի չգտան»:[46] «Չէչէն Մահմուտ պէկ»-ը պատմում էր, որ Տէր Զօրում մի երեկոյ «Միեւնոյն ժամանակ հասան իմ հեծեալներուս երեք պետերը. Ըսին թէ կեավուրները չմեռած իրենց ոսկիները կլլած էին, պէտք էր մարմիններին յօշոտել դրամները հանելու համար, հաւանեցայ ու առտուան ձգեցինք այս գործը: ...Հաւատացած էր. հրամանիս համաձայն, մեռելներուն փորերը բացուեցան եւ իրապէս կեավուրները ոսկիներ կլլած էին»:[47] Դիակները փոսի մէջ լցնելուց առաջ «Վերջին կողոպուտ մըն ալ հոս կատարեցինք. մոռցուած ոսկի, մատանիներ, օղեր, ապարանջաններ, ոսկի ակռաներ դիակներէն քաշելով»:[48] Նոյնը նա իրականացնում է ողջ կանանց նկատմամբ. «Գալով կիներուն, ասոնք ալ նմանապէս մերկացուցինք, ոսկի ակռաները քաշեցինք: Պէտք է ըսել թէ կատարեալ ատամնաբուժներ եղած ենք» (էջ 236):[49] Չէչէնների դաժանութեան մասին պատմում է նաեւ ուրֆացի Խանում Թօփէեանը. «Ջարդարարները խուժեցին մեր վրայ, ջարդուածներուս վայնասունը երկինք ու գետին կը թնդացնէր, գլուխները կը բաժնուէին մարմիններէն, թեւերը կ'անջատուէին ուսերէն, փորերը կը ճեղքուէին պահուած գանձերը գտնելու համար...»:[50] Հողէ գիւղացի Մելքոն Տէրտէրեանը պատմում է, որ Բալուի շրջանում ինչ-որ մի տեղ «Քուրդերը կը կասկածին թէ անոնք որ իրենք զիրենք գետը նետեցին, ուրեմն դրամ ունէին, կողոպտուած չէին: ... Այս գազանները դիակները դուրս կը հանէին եւ դրամ կը փնտռէին անոնց վրայ»:[51] Արաբկիրցի Հերմոն Յովսէփեանը յիշում է. «[1915 թ.] Օգոստոս 9. Ուրֆայէն մէկ օր դէպի Ռէսիւլ-Այն անապատին մէջ մեռելներով լեցուն տեղէ մը անցանք. մէկ քանի Թուրքեր դիակները կ'այրէին եւ ուրիշներ աճիւններուն մէջ դրամ, ոսկի կը փնտռէին»:[52] Շրտոէտիէում երեխան ալպիստանցի Յովհաննէս Սարաֆեանը պատմում է. «գացի հայ կնոջ քով եւ տեսայ [թերեւս արաբ] ամուսինը որ թալանէ վերադարձած էր եւ դրամ կը համրէր: Հարցուցի կնոջ. «Ուրկէ՞ց առին այսչափ շատ դրամ»: - Կիներու փորը ճեղքեր եւ աղիքներուն մէջէն հաներ են, պատասխանեց կինը»:[53] Յաճախ դիակներն այրում էին ոչ այնքան հնարաւոր համաճարակների դէմ պայքարելու նպատակով, որքան որ դրանցում ոսկեդրամներ գտնելու յոյսով: Հողէ գիւղացի Մելքոն Տէրտէրեանը պատմում է, որ Բալուի շրջանում «Գացինք տեսանք, պզտիկ ձոր մըն էր, ուր դիակները, փայտի պէս, իրարու վրայ դիզած էին: Եւ երկու քրդուհի այս դիակները կ'այրէին: Մեր քուրդը հարցուց թէ «Ինչո՞ւ կ'այրէք»: Ըսին. «որովհետեւ ոսկորները փոշիանալէ ետքը մենք անոնց մէջէն կոճակ ու դրամ կը գտնենք»»:[54]

Աւանդոյթը շարունակուեց եւ շարունակւում է աւելի քան մէկ դար. անցյալում Թուրքերն ու քրդերը աճիւնների մէջ էին ոսկի փնտրում, յետոյ եկեղեցիների ու տների մէջ: Ոսկի որոնողների խմբերի մասին այսօր բազմաթիւ պատմութիւններ կան, հարցն անգամ դիսերտացիոն աշխատանքների նիւթ է դարձել: Հարիւր տարի շարունակ մեր հարեւաններից շատերը, փաստօրէն, չէին մտածում աշխատանքով ոսկի ստեղծելու մասին, միայն աւերի ու թալանի ու դիակապտութեան ճանապարհն էր գերադասելի համարւում: Թերեւս Հոլոքոստի ժամանակ առկայ մարմիններից կորզուող ոսկու «տենդը» իր

46 Նոյն տեղում, 331:

47 Նոյն տեղում, 232-233:

48 Նոյն տեղում, 233-234:

49 Նոյն տեղում, 236:

50 Նոյն տեղում, 211:

51 Նոյն տեղում, 308:

52 Նոյն տեղում, 221:

53 Նոյն տեղում, 120:

54 Նոյն տեղում, 307:

հիմքում ունի Հայոց ցեղասպանութեան «արդիւնաւէտ» փորձառութիւնը:

Վերը նշուեց, որ աքսորի ճամփին կամ համակենտրոնացման ճամբարում գումարի առկայութիւնը երաշխիք չէր կուշտ լինելու: Աքսորականների հիմնական սնունդը դարձել էր «խոտ»-ը. *Թերեւս այդ բառի տակ հասկացւում էին ուտելի բոյսերը, որոշ դէպքերում էլ ուղղակի սովորական խոտը: Սիվրիհիսարցի Նուարդ Այտընեանը պատմում է, որ «Այս տաժանելի եւ աղէտալի ճամփորդութեան ընթացքին կրկին ու կրկին կողոպտուելով մատնուեցանք ծայրայեղ թշուառութեան: Երբ Մերսին հասանք, սկսանք դաշտերէն խոտեր հաւաքել ու ուտել: Բայց եւ այնպէս ասով ալ գոհացած էինք եթէ մարախները խուռներամ չյարձակէին ու չբնաջնջէին խոտերը»:[55] Էվէրէկցի Մաքրուհի Տէր Ղազարեանը (ծն. 1903 թ.) պատմում է. «Բարեբախտաբար եղանակը փոխուած էր, դաշտերը սկսած էին կանանչնալ, տեղ տեղ երեւցած դալարիքներ յոյս կը ներշնչէին մեր մարած սրտերուն: Մենք նորածիլ այս խոտերը ուտելով հասանք Մէսքէնէ, յետոյ Բագդայ»:[56] Սղերդցի Սրբուհի Մուրատեանը պատմում է, որ «Կը հաւաքէինք խոտեր եւ կ'ուտէինք, իսկ եթէ ցորենի արտի մը հանդիպէինք, մարախի պէս կը յարձակէինք վրան, հասկերը փշրելով մեր ափին մէջ, կ'ուտէինք անյագաբար, բայց դժբախտաբար պահապաններուն եւ մեր ոստիկաններուն խարազանը անմիջապէս կը հեռացնէր մեզ արտէն»:[57] «Խոտեր ուտելով կը պահէի գոյութիւնս»-ի մասին է պատմում ուրֆացի Ովսաննա Պէրպէրեանը:[58] Հիւսէյնիկցի Մարիամ Գաբիկեանը աքսորի ճանապարհին նշում է, Մալաթիայի դաշտերում «մեր սնունդը կը բաղկանար դաշտի խոտերէ»:[59] Նոյն ելքն էլ Մէսքէնէում էր՝ «Մեր գոյութիւնը միայն պահել կ'աշխատէինք, մերթ անապատէն խոտեր հաւաքելով եւ ուտելով...»[60] եւ Տէր Զօրում «երբեմն դաշտերէն խոտ կը հաւաքէինք եւ մեր գոյութիւնը պահել կ'աշխատէինք»:[61]*

Խանում Թօփեանի ձեւակերպմամբ, «Թշուառութիւնը խլած էր մեր բարոյական ուժը, մարդկութենէ դուրս արարածներ դարձած էինք, կը շարժէինք որպէս ուրուական»: Ու առաջարկում է պատասխան. «Չեմ գիտէր ինչո՞ւ, Թերեւս մեր շատ երիտասարդ ըլլալն էր որ մահուան հետ հաշտուիլ չէինք ուզեր»:[62] Մահուան հետ չհաշտուելու, ողջ մնալու, ինքնափրկութեան բնազդը մարդկանց մղում էր, օրինակ, ուտելիքը ամէն հնարաւոր տեղ փնտրելուն: Կարմուրճեցի 11-ամեայ Արուշ Վարդանեանը Տէր Զօրի ճանապարհին «Իբր սնունդ մրջիւններու բոյներէն ցորենի կամ կորեկի հատիկներ կը հաւաքէի»,[63] «մրջիւններու բոյներ քանդելով, որպէսզի կորեկ ճարեմ իբր սնունդ»[64] Ուրֆացի Սուլթան Թօփեանը Սուվարում ականատես է եղել, որ «ոմանք չուներ կը մորթէին, կ'ուտէին, ոմանք սատկած կենդանիներու ոսկորներ կը կրծէին»:[65] Նրա քոյր Խանումը յիշում է, որ Շէտտէտիէում «Մեր միակ շտեմարանը կենդանիներու աղբակոյտերն էին չմարսուած հատիկներով»:[66] Նոյն մօտիւացիան էր ջրի հարցում. Ռեքինա Նասիպեանը պատմում է, որ «Կը քալէինք անօթի, ծարաւ, [illegible]էինք խոտ եւ կը խմէինք մինչեւ իսկ ձիու մէզը: Ամբոս ցեխը կը քամէր եւ կը խմցնէր»:[67] Ովսաննա

55 Նոյն տեղում, 62:
56 Նոյն տեղում, 68:
57 Նոյն տեղում, 131:
58 Նոյն տեղում, 153:
59 Նոյն տեղում, 191:
60 Նոյն տեղում, 182:
61 Նոյն տեղում, 192:
62 Նոյն տեղում, 210:
63 Նոյն տեղում, 200:
64 Նոյն տեղում, 202:
65 Նոյն տեղում, 205:
66 Նոյն տեղում, 210:
67 Նոյն տեղում, 330:

Պէրպէրեանը նոյնպէս նշում է, որ «խոտեր ուտելով մեր կմախքացած մարմինը կը պահէինք: Եղան պարագաներ որ ուղտի մէզով շաղուեցինք ալիւրը եւ հաց պատրաստելով կերանք»:[68] Դշխուհի Ալեքեանը յիշում է, որ Եդեսիայից յետոյ «Այդ անիծեալ ճամբուն վրայ ջուր չկար, ժողովուրդը տառապեցաւ, երախաներուն մէզել կու տային եւ իրարու ձեռքէ կը խլէին»:[69] Սեբաստացի Վերոնիքա Քէօշէեանը պատմում է, որ 1915 թ. յուլիսի 26-ին «Անապատի տաքէն պապակած Վիքթորիա աղջիկս շռեցուցինք, խմեցինք»:[70]

Ինքնափրկութեան համար վճարուող գինը երբեմն շատ ծանր էր լինում, քանի որ գինը լինում էր երեխայի կեանքը կամ նրա անորոշ ապագան: Վերը յիշուած ամասիացի Ռեքինա Նասիպէանը (1903 թ. ծն.) պատմում է, որ դէպի Սեբաստիա աքսորի ճամփին, «Իններորդ օրը ոչ կառք ունէինք, ոչ պաշար: ... Քուրդ գիւղացիները հացի կտորը մէկ ոսկիի կը ծախէին: Աչքովս տեսայ կիներ որոնք հացի փոխարէն իրենց երախան տուին: ... Մայրեր որոնք Եփրատ գետը նետեցին իրենց երախաները, որովհետեւ անկարող էին այլեւս զանոնք կրելու: Տեսայ մայրը մը որ զաւակը գետը նետեց եւ յետոյ ինքն ալ նետուելով անձնասպան եղաւ»:[71] Սղերդցի Սրբուհի Մուրատեանը պատմում է, որ աքսորի 10-րդ օրուանից յետոյ, «Եղան մայրեր որոնք ճամբորդութեան տժգանքէն, տաքէն եւ անօթութենէն ելկուած, իրենց գրկի երեխաները ծերպերու մէջ տեղաւորեցին եւ կամ յանձնեցին զանոնք գետի արագասահ ընթացքին եւ քալեցին...»:[72] Կամ երեխային ստիպուած թողնում էին աքսորի ճամփի կէսին, քանի որ նա անկարող էր լինում քայլել, «միայն թէ 37 երկար տարիներ անցած են եւ ես տակաւին կը լսեմ անոր «Ախ... մայրիկ, մայրիկ» պոռալը ետեւէս»:[73]

«Բռնի ամուսնութիւն = ողջ մնալ = փրկութիւն» հարցում այնպէս չէ, որ ամէն ինչ միանշանակ է: «Ցեղասպանութիւն յանցագործութիւնը պատժելու եւ կանխարգելելու» կոնուենցիայի երկրորդ յօդուածի 4-րդ կէտում նշւում է, որ ի թիւս ցեղասպանութիւն նշանակող գործողութիւնների, «այդ խմբի միջավայրում մանկածնութիւնը կանխելուն միտուած միջոցների իրականացումը» նոյնպէս համարւում է ցեղասպանութիւն: Բռնի ամուսնութիւնների (նաեւ բռնաբարութիւնների) զանգուածային լինելը յանգեցնում էր հօր կողմից ոչ հայ երեխաների զանգուածային ծնունդի եւ, այդ կերպ, սպառնում էր խմբի (տուեալ դէպքում արեւմտահայութեան) վերարտադրման շարունակականութեան ապահովմանը, այլ կերպ ասած՝ ֆիզիկական գոյութեանը, ինչը համապատասխանում է կոնուենցիայի վերը նշուած կէտին:

Երբեմն դժուար է յստակ տարանջատել ցեղասպանական գործողութիւն գնահատուող «բռնի ամուսնութիւնն» իրական փրկութիւնից: Բերեմ մի քանի օրինակներ, որոնք սկսւում են բռնի ամուսնութեամբ, թերեւս նաեւ կրօնափոխութեամբ, հաստատ անուանափոխութեամբ, սակայն աւարտւում են ընտանիքի կազմամբ, երեխաների ծնունդով, բայց եւ տրամատիկ յիշողութեան բազմապիսի դրսեւորումներով: «Բռնի ամուսնութիւն» ձեւակերպումն էլ առաջին հայեացքից կարող է «բռնի» չթուալ, քանի որ ի վերջոյ աղջիկներն իրենք են համաձայնւում ամուսնանալ, նրանց չեն բռնաբարում բառիս բուն իմաստով: Սակայն ի՞նչ է նախորդում այդ

68 Նոյն տեղում, 153:
69 Նոյն տեղում, 281:
70 Նոյն տեղում, 219:
71 Նոյն տեղում, 330:
72 Նոյն տեղում, 131:
73 Նոյն տեղում, 152:

«ոչ բռնի» ամուսնութեանը: Դրան նախորդում են այնպիսի պայմանների առկայութիւնը կամ ձեւաւորումը, երբ ճարահատեալ, ստիպուած, ողջ մնալու կամ հարազատների կեանքը փրկելու համար են աղջիկներն ակամայ ամուսնանում օտար, ոչ սիրելի, նաեւ ազգակիցների, գուցէ անգամ հարազատների սպանութեան մէջ ներգրաւուած անձանց հետ: Յամենայն դէպս, շարունակում են ապրել զանգուածային սպանութիւնների մէջ ներգրաւուած անձանց միջավայրում՝ ընտանիքում, գիւղում կամ քաղաքում, վերջապէս՝ երկրում:

Դիմենք օրինակների: Երկու նման դէպք յիշուած է նախորդ էջերում, Ռեբեկա Ըվէճեանի եւ Սուլթան Թօփեանի պատմութիւններում: Խանում Թօփէեանը (ծն. 1898 թ.) (արաբական անունը՝ Ֆըտտայ, զաւակների անունները՝ արաբական) քրոջ պատմութեանն աւելացնում է իր պատմութիւնը. «Զիս ազատող մարդը ամուսնացաւ հետս: Քոյրերէս մէկը մեռաւ եւ միւս քոյրս ալ ամուսնացուց: Ինծի հանդէպ շատ լաւ վերաբերմունք ունի [ամուսինը]: Հակառակ անոր որ քանի մը կին առնելու օրէնքին կը թոյլատրէ, կրկնակ ամուսնութեան առաջարկները միշտ ալ մերժած է ըսելով թէ «ոուէ պակասութիւն չեմ տեսած իմ կնոջս վրայ որ ուրիշը բերեմ»: Ունեցայ երկու մանչ եւ երկու աղջիկ զաւակ: Բոլորն ալ ամուսնացուցած եմ, ներկայիս հովուութեամբ կը զբաղինք, ունինք 10 ուղտ եւ ոչխարի հօտեր, հանգիստ կ'ապրինք: Ամուսինս զիս իմ կրօնքիս մէջ ազատ ձգած է: Ամէն իրիկուն կը կրկնեմ «Հայր Մեր»ը եւ «Հաւատամք»ը, որմէ վերջ անկողին կը մտնեմ»:[74]

Էէնիճէցի Վերժին Թինկիրեանը, որը Պապ/Բաբում հիւանդացել էր տիֆով եւ «խորհելով թէ ալ մահը անվրէպ էր ինձ համար, նոյն միջոցին ինձ ներկայացող արաբի մը յանձնեցի աղջիկս յօժար կամքով»[75], *Տէր-Զօրում, «Փախած գիւղիս մէջ, վերադարձի պահուս, տանտիկնոջ տուած մի քիչ ուտելիքով քանի մը օր կրցայ ապրիլ, անկէ ետքը մնացի դարձեալ անօթի եւ խեղճ, հազիւ ցնցոտիով մը ծածկած մերկութիւնս: Նոյն միջոցին Ահմէտ անունով արաբ մը եկաւ տեսաւ վիճակս, վրաններու հսկիչ պաշտօնեային տուաւ 20 մէճիտ եւ ոչխար մը ու զիս իբր իր օրինաւոր կինը տարաւ Հաւախ ցեղախմբին մէջ, որուն շէյխը կը կոչուէր Շէյխ Ասատ: Հոն ամուսինս ունէր 50 ոչխար եւ մասը մը գետին ցանելու համար: Ես, անվարժ պետուինի մը սովորական աշխատանքներուն, շատ դժուարութիւն կը քաշէի. օրինակի համար ոչխարները կթել, խնամել, դաշտի աշխատանքներ, հնձել, ցանել եւ այլն, բայց տակաւ առ տակաւ վարժուեցայ, ունեցանք 1 աղջիկ եւ 6 մանչ, որոնցմէ հինգ հատը մեռան եւ մնացին երկու մանչ զաւակներս միայն, որոնցմէ մին 25 տարեկան, կը կոչուէր Թրապ. իսկ միւսը 27 տարեկան՝ Ապտրահման: Երկուքն ալ ամուսնացած են»:*[76]

Սէօլէօգցի (Պրուսայի շրջան) Իսկուհի Դանիէլեանը (արաբական անունը՝ Խատիճէ) պատմում է, որ Տէր-Զօրում «[Ոստիկանապետ Ալի Էֆէնտիի հետ] իմ այս ամուսնութեանս հետեւանքով թէեւ ծնողքս, եղբայրներս եւ քոյրս գաղթականութենէ զերծ մնացին եւ կը բնակէին Տէր-Զօր, բայց դժբաղդաբար վերջին հրամանի համեմատ, բոլոր գաղթականները պէտք էր հեռանային Տէր-Զօրէն, ուստի ծնողքս ալ ընտանեօք քշուեցան գետէն անդին, ետքը իմացայ որ ճամբան գնդակահարուած են:

Ալի Էֆէնտին երբ հետս ամուսնացաւ զիս իմ կրօնքիս մէջ ազատ ձգած էր, բայց ետքը իր շրջանակէն թելադրուած ուզեց որ իր կրօնքին հետեւիմ, ես չյօժարեցայ, որով ան սկսաւ պաղ վերաբերմունք ցոյց տալ ին-

74 Նոյն տեղում, 212:

75 Նոյն տեղում, 45-46:

76 Նոյն տեղում, 47:

ծի հանդէպ: ... Այնուհետեւ ես մնացի ազատ իմ կրօնքիս մէջ: ... Այսպէս անցաւ երեք տարի, ես ունեցայ անդրանիկ աղջիկ զաւակս»: Ալի Էֆէնտին ժամանակ անց բերում է երկրորդ կնոջը, որը նոյնպէս Հայուհի էր՝ Նուրիցա Թիւթիւնճեան: «...Թէեւ սկիզբէն անտանելի թուեցաւ մեզի, բայց վարժուեցանք իրարու եւ սիրով ապրեցանք, երկու արենակիցներ եղանք խորհրդակից եւ եղանք սրտակից եւ ցաւակից: Ալի Էֆէնտին շատ ազատամիտ մարդ էր, երկուքիս հանդէպ ալ շատ ազնիւ վերաբերմունք ունեցաւ, 35 տարի միասին ապրեցանք, ես ունեցայ երեք աղջիկ եւ մանչ զաւակ մը, որոնց անունները դրած եմ զոյգ. Մուհամմէտ, Փանոս. Արշալոյս, Ցիքրիյէ. Ալիս, Էնիսէ. պզտիկ աղջիկս Աֆաֆ: Տղաս ներկայիս կը գտնուի Պելճիքա եւ կը պատրաստուի իբրեւ ելեքտրական երկրաչափ»:[77]

Վերոբերեալ օրինակները (եւ բազմաթիւ այլ նման դէպքեր) վկայութիւնն են այն իրողութեան, որ կեանքի համար վտանգաւոր իրավիճակներում, երբ ապրելու խնդիր է դրուած, ականատես ենք նաեւ կանանց համաձայնութեամբ, բայց եւ ստիպմամբ *ամուսնութեան դէպքերի. ուզում ես ապրել՝ ամուսնացիր:*[78] *Այսինքն, գործ ունենք* ակամայ ամուսնութիւնն իբրեւ փրկութիւն *իրողութեան հետ:*

Ինչու էին արաբներն ամուսնանում Հայուհիների հետ: Թերեւս մի քանի պատճառներով, որոնք չեն սահմանափակւում ներքոբերեալներով. ա) Հայուհի կինն ունէր գրեթէ ստրուկի կարգավիճակ. նրան կարելի էր վաճառել կամ նուիրել, դաժանօրէն շահագործել, շատ դէպքերում էլ օգտագործում էին որպէս սպասուհի՝ անվճար, քանի որ գնալու տեղ չունէր, բ) Հայուհին անպաշտպան էր՝ բարեկամ-ազգական չունէր, ում մօտ կարող էր վերադառնալ, եթէ ամուսինն իրեն թողնէր, հետեւաբար ամէն կերպ կը ցանկանար չլքել ամուսնուն, գ) նրա համար պէտք չէր գլխագին վճարել, դ) շնորհքով էր, այսինքն, տիրապետում էր այնպիսի հմտութիւնների, որոնք չունէր քոչուոր վրանաբնակը, ու դա կարելի էր յաւուր պատշաճի օգտագործել, է) առաջադէմ էր՝ հողագործ էր կամ քաղաքացի, յաճախ կրթուած էր ու երեխաներին էլ կը կրթէր, զ) համեմատաբար աւելի գեղեցիկ էր՝ հազարամեակներ շարունակ ապրել է ոչ անապատում, եւ այլն:

Այսինքն, ստիպմամբ կամ «կամովին» ամուսնութիւնը յաճախ ուղեկցւում էր շահագործմամբ, անուանափոխութեամբ, կրօնափոխութեամբ, տրաւմատիկ յիշողութեամբ, ազգային դիմագծի գրեթէ ամբողջովին վերացմամբ:

* * *

Յօդուածում դիտարկուած նիւթերը թոյլ են տալիս պատասխան առաջարկել առաջին էջում բերուած հարցադրմանը. համեմատած տեղերում տեղ գտած կոտորածների հետ, աքսորի կամ համակենտրոնացման ճամբարներում հայերի «փրկութիւնը» մեծ տարբերութիւններ չի ունեցել: Հետազօտողը կրկին ականատեսն է փրկութեան խոստումների (այդ թւում՝ կաշառքի հիմքով) ու դրանց դրժումների (որոնք յաճախ ուղեկցւում են սպանութիւններով կամ այլ բնոյթի բռնութիւններով), «փրկուածների» տնտեսական ու սեռական շահագործման, կրօնափոխութեան, անուանափոխութեան դրսեւորումների: Մեծ թիւ են կազմում բռնի կամ «ստիպուած/ճարահատեալ» ա-

77 Նոյն տեղում, 139-141:

78 Ասուածի վկայութիւնն է հակառակ օրինակը, որտեղ կարեւորը պատասխանի ձեւակերպումն է: Էլերեկցի Մաքրուհի Տէր Ղազարեանը, որը տեղահանութեան ժամանակ 12 տարեկան էր, պատմում է, որ Ռագգայում գտնուելու ժամանակ, «Թուրքեր եւ արաբներ մօրս հետ ամուսնանալ ուզեցին, բայց մայրս մերժեց եւ ըսաւ. Ո՞կը նախընտրեմ անօթութեամբ մեռնիլ քան թէ օտարի հետ ամուսնանալ» (*Տէր-Զօր*, 68):

մուսնութիւնները: Բոլոր դէպքերում ընդունող հասարակութեան մէջ մնալու պարագայում վերջնական հետեւանքը, կարծես թէ, լինում է ինքնութեան կորուստը, կամ դէպի դա տանող ճանապարհը: Այս գործողութիւնները, մեր համոզմամբ, հաւասարազօր են 1948 թ. «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնուենցիայի երկրորդ յօդուածի բ) կէտի դրսեւորումներին, ըստ որի, ցեղասպանութիւն է համարւում նաեւ «խմբի անդամներին մարմնական լուրջ վնասուածքներ կամ մտաւոր վնաս պատճառելը»: Այս տեսանկիւնից խիստ բնութագրական ձեւակերպում է «կենդանի-նահատակ»-ը, որն օգտագործում է «Տէր-Զօր» ժողովածուի կազմող Լեւոն Մեսրոպը: «Փրկութեան» պատմութիւնները միանշանակ քննութիւն չեն բռնում նաեւ եադուաշեմեան Righteous among the Nations ինստիտուտի շուրջ վեց տասնամեակի կեանք եւ միջազգային լայն ճանաչում ունեցող ձեւակերպումներին: